

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.1

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

/քննության հարցերի պատասխաններ/

Նոյեմբեր 2020թ.

ԲԱԺԻՆ Ա. Պատասխաններ

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	դ
2	ա
3	բ
4	գ
5	բ
6	բ
7	ա
8	դ
9	բ
10	գ
11	դ
12	գ
13	գ
14	բ
15	դ
16	ա
17	գ
18	դ
19	գ
20	ա
21	բ
22	գ
23	դ
24	բ
25	բ

Ընդամենը 50 միավոր

Հարցը, պատասխանի ճիշտ տարբերակը և իրավական հիմքը

1. Իրավաբանական անձի հիմնադիրները.

դ/ համապարտ պատասխանատվություն են կրում մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը ծագած՝ իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 54-րդ հոդված

Հոդված 54. Իրավաբանական անձի հիմնադիրների պատասխանատվությունը

Իրավաբանական անձի հիմնադիրները համապարտ պատասխանատվություն են կրում մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը ծագած՝ իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

2. Ներկայացուցչություն է համարվում .

ա/ իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդված

Հոդված 61. Ներկայացուցչություններ և մասնաճյուղեր

1. Ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

3. Փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը պետք է դրույթներ պարունակեն վերակազմակերպված իրավաբանական անձի.

բ/ գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդված

Հոդված 65. Փոխանցման ակտ և բաժանիչ հաշվեկշիռ

1. Փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը պետք է դրույթներ պարունակեն վերակազմակերպված իրավաբանական անձի գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները:

4. Լիակատար ընկերակցությանը մասնակցելուց հրաժարվելը պետք է հայտարարվի ընկերակցությունից մասնակցի դուրս գալուց.

գ/ առնվազն վեց ամիս առաջ:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 85-րդ հոդված

Հոդված 85. Լիակատար ընկերակցությունից մասնակցի դուրս գալը

1. Լիակատար ընկերակցության մասնակցին իրավունք ունի դուրս գալ նրանից՝ հայտարարելով ընկերակցությանը մասնակցելուց իր հրաժարվելու մասին:

Լիակատար ընկերակցությանը մասնակցելուց հրաժարվելը պետք է հայտարարվի ընկերակցությունից մասնակցի դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ:

5. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա նրա անձնական պարտքերի համար բռնագանձում տարածել թույլատրվում է.

բ/ միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 102-րդ հոդված

Հոդված 102. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը

1. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա նրա անձնական պարտքերի համար բռնագանձում տարածել թույլատրվում է միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում:

6. Բաժնետիրական ընկերությունում ո՞ր դեպքում է պարտադիր տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) ստեղծումը.

բ/ երբ բաժնետերերի քանակը հիսունից ավելի է:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդված

Հոդված 115. Բաժնետիրական ընկերության կառավարումը

2. Հիսունից ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում ստեղծվում է տնօրենների խորհուրդ (դիտորդ խորհուրդ):

7. Անբաժանելի է համարվում այն գույքը, որը.

ա/ չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման կամ ենթակա չէ բաժանման օրենքի ուժով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 136-րդ հոդված

Հոդված 136. Բաժանելի և անբաժանելի գույք

1. Գույքը կարող է լինել բաժանելի և անբաժանելի:

Անբաժանելի է համարվում այն գույքը, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման կամ ենթակա չէ բաժանման օրենքի ուժով:

8. Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե.

դ/ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդված

Հոդված 141. Ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն

1. Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա

օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

9. Ըստ ներկայացնողի արժեքուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը, կոչվում է.

բ/ հասարակ պահեստային վկայագիր:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 161-րդ հոդված

Հոդված 161. Հասարակ պահեստային վկայագիր

Հասարակ պահեստային վկայագիր է համարվում ըստ ներկայացնողի այն արժեքուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը:

10. Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը.

գ/ որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված

Հոդված 188. Ինքնակամ կառույցը

2. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:

11. Կոշտ գրավ է համարվում այն գրավը.

դ/ որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավատուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով, ինչպես նաև գրավատուի մոտ թողնված գրավի առարկան կամ որի նկատմամբ գրավի իրավունքը գրանցված է օրենքով սահմանված կարգով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 258-րդ հոդված

Հոդված 258. Կոշտ գրավ

Կոշտ գրավ է համարվում այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավատուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով, ինչպես նաև գրավատուի մոտ թողնված գրավի առարկան կամ որի նկատմամբ գրավի իրավունքը գրանցված է օրենքով սահմանված կարգով:

12. Կեղծ է համարվում այն գործարքը, որը.

զ/ կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդված

Հոդված 306. Կեղծ և շինծու գործարքների անվավերությունը

1. Կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է:

13. Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից. գ/ մեկ տարվա ընթացքում:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդված
Հոդված 322. Լիազորագրի ժամկետը*

1. Լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

14. Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի.

բ/ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

*Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդված
Հոդված 83. Աշխատանքային պայմանագրի հասկացությունը*

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

15. Նշվածներից որը չի համարվում աշխատանքի էական պայման.

դ/ կազմակերպության կազմակերպատիրական ձևը:

*Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդված
Հոդված 105. Աշխատանքի էական պայմանները փոփոխելը*

2. Աշխատանքի էական պայմաններ են աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային պայմանագրի տեսակը, որոնց և (կամ) գործատուի փոփոխման դեպքում գործատուն աշխատողին պետք է ծանուցի սույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ժամկետներում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) հիմնական աշխատավարձի չափի և (կամ) հավելումների, հավելավճարների բարձրացման դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են.

2) օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակի կրճատման դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են:

16. Աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու առանց գործատուի համաձայնության.

ա/ ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդված

Հոդված 112. Աշխատանքային պայմանագրի լուծումը աշխատողի նախաձեռնությամբ

3. Աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ:

17. Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել.

գ/ օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդված

Հոդված 139. Աշխատաժամանակի տևողությունը

3. Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

18. Աշխատանքային տարում, որի համար տրամադրվում է ամենամյա արձակուրդ, չեն ներառվում.

դ/ չվճարվող արձակուրդի ժամանակահատվածը:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 165-րդ հոդված

Հոդված 165. Ամենամյա արձակուրդի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժը

Աշխատանքային տարում, որի համար տրամադրվում է ամենամյա արձակուրդ, ներառվում են՝

1) փաստացի աշխատած ժամանակահատվածը.

2) այն ժամանակահատվածը, որի ընթացքում, օրենսդրությանը համապատասխան, պահպանվում են աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) և աշխատավարձը՝ ամբողջությամբ կամ մասամբ.

3) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը.

4) վճարովի ամենամյա արձակուրդի ժամանակահատվածը.

5) հարկադիր պարապուրդում աշխատողի գտնվելու ժամանակահատվածը՝ նախկին աշխատանքին վերադառնալու դեպքում.

6) օրինական գործադուլի ժամանակահատվածը.

7) օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ:

19. Կարգապահական տույժը.

զ/ կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդված

Հոդված 228. Կարգապահական տույժի բողոքարկումը

Կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

20. Նշված պնդումներից որն է ճիշտ.

ա/ լիցենզիան տրվում է միայն լիցենզավորման ենթակա գործունեության յուրաքանչյուր տեսակի համար:

Հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված

Հոդված 6. Լիցենզիայի գործողությունը

1. Լիցենզիան տրվում է միայն սույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության յուրաքանչյուր տեսակի համար:

2. Լիցենզիաների գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

21. Որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով լիցենզավորված

անձին լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումը կոչվում է.

բ/ լիցենզիայի գործողության կասեցում:

Հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված

Հոդված 34. Լիցենզիայի գործողության կասեցումը

1. Լիցենզիայի գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

22. Բաժնետիրական ընկերության հիմնադիր ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների, ինչպես նաև բաժնետերերի.

զ/ 3/4-ը:

Հիմք՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված

Հոդված 12. Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը

2. Հիմնադիր ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների, ինչպես նաև բաժնետերերի 3/4-ը:

23. Բաժնետիրական ընկերության տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո.

դ/ վեց ամսվա ընթացքում:

*Հիմք՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված
Հոդված 66. Ընդհանուր ժողովը*

Տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

24. Միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ (եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք), վարչական մարմինների կողմից անհավասար մոտեցում ցուցաբերելու սահմանափակումը վերաբերում է.

բ/ կամայականության արգելքին:

*Հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված
Հոդված 7. Կամայականության արգելքը*

1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

25. Նշվածներից ո՞րը վարչական վարույթի փուլ չէ.

բ/ նախաքննության փուլ:

Հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված

Հոդված 20. Վարչական վարույթի փուլերը

1. Վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Խնդիր 1. /12 միավոր/

Պատասխան /հարց 1 /5 միավոր/

Խնդրում նկարագրված արտադրական № 2 մասնաշենքի վաճառքն իրենից ներկայացնում է շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարք, որը կարգավորվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (Օրենք) 62-65 հոդվածներով: Ըստ էության, այն հանգամանքը, որ անշարժ գույքը վաճառվել է Ընկերությանը փոխկապակցված անձի, ինքնին իրավախախտում չէ: Բարկեն Բագրատունու այն պնդումը, որ խորհրդի նախագահը չարաշահել է իր լիազորությունները, այդքան էլ միանշանակ չէ, սակայն խորհրդի ընդհանուր գործողությունը հարցի շուրջ իրավաչափ չէ: Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը նախատեսում են շահագրգռվածության առկայությամբ գործարքների՝ խորհրդի կողմից ընդունելու կարգը: Նույն հոդվածի 3-րդ կետում նշված են այն դեպքերը, երբ շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերաբերյալ որոշումը պետք է կայացնի ժողովը:

Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.

բ) գործարքը և/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է Ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Ըստ էության ակնհայտ է, որ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքն Ընկերության ակտիվների 10 տոկոսից ավելին է, ուստի այն պետք է հաստատվեր ժողովի կողմից: Այս պահանջը չի պահպանվել, քանի որ գործարքի կատարմանը հավանություն է տվել խորհուրդը, չնայած որ ինչպես Ընկերության տնօրենը տեղեկացրել էր, խորհրդի նախագահը՝ որպես շահագրգռվածություն ունեցող անձ, քվեարկությանը չէր մասնակցել: Սակայն խորհրդի նախագահի խորհրդի նիստին չմասնակցելու փաստն ամենևին չի վկայում այն մասին, որ խորհուրդն իր լիազորությունների վերազանցում թույլ չի տվել:

Գործարքի հետ կապված մյուս իրավական խնդիրը կայանում է նրանում, որ արտադրական № 2 մասնաշենքի շուկայական արժեքի վերաբերյալ եզրակացություն չի եղել: Օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ շահագրգռվածության առկայությամբ Ընկերության ցանկացած գործարք ներկայացվում է Ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ բացահայտելով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ և կցելով անկախ գնահատողի եզրակացությունը շուկայական արժեքին գործարքի համապատասխանության վերաբերյալ: Բացի այդ, Օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ կետում հստակ ամրագրված է, որ անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի սահմանումը պարտադիր է Օրենքի 58-րդ հոդվածով սահմանված՝ Ընկերության բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի հետգնման, ինչպես նաև 64-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան գործարք կնքելու դեպքերում: Քանի որ քննարկվող դեպքում գործարքը համապատասխանում էր 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, ուստի անկախ գնահատողի եզրակացությունը պարտադիր էր: Այսպիսով,

Ընկերության տնօրենի պնդումն առ այն, որ անշարժ գույքն իր հաշվեկշռային արժեքից ավելի բարձր արժեքով է վաճառվել, ուստի անկախ գնահատողի եզրակացության կարիք չկար, իրավաչափ չէ:

Պատասխան /հարց 2 /2 միավոր/

Ժողովի իրավասությունների շրջանակը սահմանվում է Օրենքի 67-րդ հոդվածով: Նշված հոդվածի 1-ին կետում թվարկված են ժողովի իրավասությանը պատկանող հարցերը, որոնցից «ժը» և «Ժթ» ենթակետերը վերաբերում են Օրենքով նախատեսված դեպքերում խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքների հաստատմանը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված է, որ ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք Օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն: Փաստացի ժողովը չունի անշարժ գույքի վաճառքի գործարքը չեղարկելու համապատասխան իրավասություն, ուստի Օրենքի 65-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով կարող է որոշում ընդունել՝ դատական կարգով չեղարկել (անվավեր ճանաչել) նշված գործարքը: Ընկերության բաժնետերերից յուրաքանչյուրն իր հերթին ևս իրավունք ունի պահանջել նշված գործարքը չեղարկել (անվավեր ճանաչել):

Ինչ վերաբերում է, թե քվեարկությամբ ինչ որոշում կայացվեց, ապա այս մասով պետք է նկատի ունենալ, որ քանզի որոշմանը կողմ էին քվեարկել Բաբկեն Բագրատունին և Դավիթ Դեմիրճյանը, իսկ վերջինս նաև հանդիսանում էր Եղիշե Եփրեմյանի ներկայացուցիչը, ապա փաստացի ստացվում է, որ հարցին կողմ է քվեարկել բաժնետերերի 55.5 տոկոսը (90 բաժնետոմսից 50-ը), ինչը քվեարկության իրավունք ունեցողների պարզ մեծամասնությունն է, և վերջինս բավարար է սովյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու՝ գործարքը դատական կարգով չեղարկելու (անվավեր ճանաչելու) համար:

Պատասխան /հարց 3 /5 միավոր/

Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված է, որ խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը: Խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող Ընկերությունում: Մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասություններն իրականացնում է ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ Ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշումներ ընդունել Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:

Հետևապես Արմեն Արարատյանի այն պնդումը, որ որպես բաժնետիրական ընկերություն, իրենք պարտավոր են ունենալ խորհուրդ, չի բխում օրենսդրության պահանջներից: Խորհրդի առկայությունն օրենսդրորեն պարտադիր է, եթե բաժնետերերի քանակը 50 և ավելի է: Տվյալ դեպքում 5 բաժնետեր է, ուստի ըստ Օրենքի, Ընկերությունը կարող է խորհուրդ չունենալ և սովյալ դեպքում խորհրդի՝ Օրենքով վերապահված իրավասությունները կփոխանցվեն ժողովին:

Դավիթ Դեմիրճյանի առաջարկն Օրենքի սահմաններում էր: Միայն թե այստեղ պետք է նկատի ունենալ, որ եթե Ընկերության կանոնադրությամբ նախատեսված է խորհրդի ձևավորումը, ապա ժողովը կարող է որոշում կայացնել խորհրդի լուծարման վերաբերյալ միայն այն դեպքում, երբ կանոնադրության մեջ կատարի համապատասխան փոփոխություններ և դրանք ներկայացնի ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական գրանցման նպատակով:

Բարկեն Բագրատունու պահանջը՝ որպես Ընկերության բաժնետեր խորհրդի կազմում առանց քվեարկության ընդգրկվելու վերաբերյալ, չի բխում Օրենքի դրույթներից: Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ կետը նշում է, որ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցիչին: Այսինքն՝ առանց ընտրության խորհրդի կազմում կարող են ընդգրկվել միայն այն բաժնետերերը կամ իրենց ներկայացուցիչները, ովքեր ունեն 10 և ավելի տոկոս բաժնեչափ: Բարկեն Բագրատունին ունի 10 տոկոսից պակաս բաժնեչափ (8 բաժնետոմս 90-ից, որը կազմում է շուրջ 9 տոկոս բաժնեչափ), ուստի չի կարող առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք

Հոդված 59. Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշման կարգը

1. Գույքի շուկայական արժեք է համարվում, ներառյալ՝ Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը, այն գինը, որով գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայնեք վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայնեք այդ գույքը ձեռք բերել:

2. Գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ՝

ա) Ընկերության բնականոն գործունեության հետ կապված այն դեպքերի, երբ գործարքը կնքվում է Ընկերության ծախսերի և եկամուտների նախահաշվի շրջանակներում.

բ) սույն օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում: Հիսուն և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի՝ գործարքի կնքմամբ շահագրգռվածություն չունեցող, անկախ անդամների կողմից:

3. Գույքի շուկայական արժեքի սահմանման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Ընկերությունը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:

4. Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի սահմանումը պարտադիր է սույն օրենքի 58-րդ հոդվածով սահմանված՝ Ընկերության բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի հետգնման, ինչպես նաև 64-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան գործարք կնքելու դեպքերում:

5. Ընկերության բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գներին վերաբերող և համապատասխան զանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Ընկերության գուտ ակտիվների արժեքը, ինչպես նաև այն գինը, որն Ընկերության բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել Ընկերության գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:

Սույն կետով որոշվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է Ընկերության գուտ ակտիվների արժեքը հիմք ընդունելով:

Հոդված 62. Ընկերության գործարքներում շահագրգռվածությունը

1. Ընկերության գործարքներում շահագրգռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝

ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:

2. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված են համարվում Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), Ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

Հոդված 63. Ընկերության գործարքներում շահագրգռվածության վերաբերյալ տեղեկատվությունը

1. Ընկերության փոխկապակցված անձինք պարտավոր են Ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի տրամադրել տեղեկատվություն՝

ա) այն մասին, որ իրենք հանդիսանում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ՝ բացահայտելով փոխկապակցվածությանն առնչվող հանգամանքները՝ մինչև գործարքը կնքելը.

բ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգռ անձ՝ սույն կետով նախատեսված տեղեկատվությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Շահագրգռվածության առկայությամբ Ընկերության ցանկացած գործարք ներկայացվում է Ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ բացահայտելով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ և կցելով անկախ գնահատողի եզրակացությունը շուկայական արժեքին գործարքի համապատասխանության վերաբերյալ:

3. Ընկերության գործադիր մարմինը կամ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմին պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների հիման վրա վարել Ընկերության փոխկապակցված անձանց ռեեստր:

Հոդված 64. Շահագրգռվածության առկայության դեպքում ընկերության գործարքների կնքման կարգը

1. Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

2. 500 և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

- գործարքը կնքելու հետևանքով Ընկերության կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Ընկերության կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

- գործարքը կնքելու հետևանքով Ընկերության ձեռք բերված գույքի, ստացված ծառայության կամ Ընկերության համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

3. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.

բ) գործարքը և/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է Ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Ընկերության կանոնադրությամբ սույն մասով նախատեսված որոշման ընդունման համար կարող է սահմանվել ձայների առավել մեծ քանակ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հատկանիշներին համապատասխանող գործարքը կարող է կնքվել խորհրդի որոշմամբ, եթե այդ գործարքն Ընկերությանը տրամադրվող փոխառություն է:

5. Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

6. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միննույն ժամանակ Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի VIII գլխի դրույթները:

Հոդված 65. Շահագրգռվածության առկայությամբ գործարքների հետևանքները

1. Գործարքում շահագրգիռ ճանաչված անձն Ընկերության առջև պատասխանատվություն է կրում սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքի հետևանքով Ընկերությանը պատճառված վնասների չափով:

Գործարքում շահագրգիռ ճանաչված անձը պարտավոր է նաև Ընկերությանը վերադարձնել ցանկացած շահույթ, որ ստացել է սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքներից:

Սույն օրենքի 63-րդ հոդվածի պահանջները խախտող անձինք պատասխանատվություն են կրում խախտման հետևանքով Ընկերությանը կամ այլ անձանց պատճառված վնասի համար:

2. Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք Ընկերության և այլ շահագրգիռ անձանց առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

3. Շահագրգռվածության առկայության դեպքում Ընկերության գործարքների կնքման վերաբերյալ սույն գլխի պահանջները չեն կիրառվում, եթե՝

ա) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը.

բ) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը.

գ) տեղաբաշխված բաժնետոմսերն Ընկերության կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերը:

4. Եթե Ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա շահագրգռվածության առկայության դեպքում սույն գլխի պահանջները չեն կիրառվում:

5. Փակ Ընկերության (որի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի քանակը չի գերազանցում 10-ը) կանոնադրությունը կարող է նախատեսել դրույթներ՝ սույն գլխի նորմերի պահանջները մասնակի կամ ամբողջությամբ չկիրառելու մասին:

6. Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն պահանջելու՝

- անվավեր ճանաչել սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը,

- գործարքում շահագրգիռ ճանաչված անձանց կողմից գործարքի հետևանքով պատճառված վնասի հատուցում,

- գործարքից ստացված շահույթի վերադարձ Ընկերությանը:

7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքի հաստատումը գործարքում խախտում կատարած անձին չի ազատում սույն օրենքի խախտմամբ կնքված գործարքի հետևանքով Ընկերությանը կամ բաժնետերերին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից:

Հոդված 67. Ժողովի իրավասությունները

1. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժա) Ընկերության աուդիտին իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

ժգ) սույն օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) ժողովի վարման կարգը.

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժե) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ սույն օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ սույն օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

ի) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.

իա) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իդ) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.

իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.

իզ) սույն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը.

իէ) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը:

Ժողովի՝ «իբ-իե» ենթակետերով սահմանված իրավասություններն իրականացվում են, եթե դրանք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ վերապահված չեն խորհրդին:

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին, բացառությամբ սույն կետի երկրորդ մասով սահմանված հարցերի:

Ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին կետի «իգ» և «իե» ենթակետերով սահմանված հարցերով որոշումների ընդունումը կարող է փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին, իսկ «է», «թ», «ի» և «իբ-իե» ենթակետերով սահմանված հարցերով՝ խորհրդին:

3. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք սույն օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն:

Հոդված 76. Բաժնետիրոջ մասնակցության կարգը ժողովում

1. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:

Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է Օրենսգրքի, օրենքի կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի, ինչպես նաև գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա: Լիազորագիրը պետք է պարունակի տեղեկություններ բաժնետիրոջ և նրա ներկայացուցչի մասին (անունը կամ անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը, անձնագրային կամ պետական գրանցման տվյալները): Լիազորագրերը պետք է ձևակերպված լինեն Օրենսգրքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով:

Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի յոթերորդ պարբերությամբ նախատեսված դեպքի, բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել ժողովում միայն լիազորագրի առկայության դեպքում:

Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը:

Ընկերության բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի:

Ընկերության բաժնետոմսերի անվանատիրոջ կողմից բաժնետիրոջ (բաժնետերերի) անունից ժողովին մասնակցելու համար լիազորագիր չի պահանջվում, և անվանատիրոջ լիազորությունները հավաստվում են սույն օրենքի 96.1-ին հոդվածով սահմանված կարգով:

2. Եթե Ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ձեռք բերած անձանց տրամադրել քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Նշված կարգը կիրառվում է նաև բաժնետոմսի յուրաքանչյուր հաջորդ փոխանցումների ժամանակ:

Հոդված 77. Ժողովի քվորումը

1. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Եթե ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:

2. Եթե Ընկերության բաժնետերերին սույն օրենքով սահմանված կարգով քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

3. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

Ընկերության բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, իսկ սույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում՝ ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:

Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

Հոդված 78. Քվեարկությունը ժողովում

Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս» մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության և սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:

«Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս» մեկ ձայն» սկզբունքը կիրառելիս արտոնյալ բաժնետոմսերի տված ձայների քանակի հաշվարկն իրականացվում է սույն օրենքի 68-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Հոդված 83. Խորհուրդը

1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող Ընկերությունում:

Մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասություններն իրականացնում է ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ Ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշումներ ընդունել սույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:

2. Ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարզևավճար և (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարզևավճարի և (կամ) փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են ժողովի որոշմամբ:

3. Ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Ընկերության բաժնետերերի ծանոթացման համար և խորհրդի անդամների մասին պարունակում է հետևյալ տվյալները՝

ա) անունը և ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) աշխատանքի և (կամ) բնակության վայրն ու հեռախոսահամարը.

գ) զբաղմունքը, մասնագիտությունը և կրթությունը.

դ) խորհրդի կազմում ընտրվելու տարին, ամիսը, ամսաթիվը և խորհրդի անդամությունից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը (եթե դա տեղի է ունեցել).

ե) քանի անգամ է վերընտրվել խորհրդի կազմում.

զ) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի քանակը, որը պատկանում է Ընկերության բաժնետեր հանդիսացող խորհրդի անդամին.

է) տեղեկություններ այլ իրավաբանական անձի մասին, որում նշված անձն զբաղեցնում է ղեկավար (խորհրդի նախագահ կամ անդամ, տնօրեն, գլխավոր տնօրեն կամ վարչության, տնօրինության անդամ և այլն) կամ այլ պաշտոն, այդ պաշտոնում նրա իրավունքներն ու պարտականությունները, եթե տեղեկությունների տրամադրումով չեն խախտվում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, ինչպես նաև տեղեկություններ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով այդ իրավաբանական անձի հետ փոխկապակցվածության մասին.

ը) կանոնադրությամբ կամ խորհրդի կանոնակարգով նախատեսված այլ տվյալներ:

Հոդված 84. Խորհրդի իրավասությունները

1. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ սույն օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.

ե) սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ.

է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

թ) սույն օրենքով նախատեսված դեպքերում Հնկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

ժ) Հնկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները, եթե կանոնադրությամբ այդ իրավունքները վերապահված են խորհրդին.

ժ.1) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.

ժա) Հնկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ) Հնկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժգ) Հնկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժդ) Հնկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժե) Հնկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ) Հնկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժէ) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Հնկերություններին մասնակցությունը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է խորհրդին և, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժը) Հնկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժթ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ի) Հնկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ սույն օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

իա) սույն օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

իբ) Հնկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իգ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իդ) Հնկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) սույն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

2. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել

Հնկերության գործադիր մարմնի լուծմանը:

Սույն օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ մասով նախատեսված դեպքում խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են ժողովի իրավասությանը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետի «զ», «թ», «ժզ», «իբ-իդ» ենթակետերով նախատեսված

հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Հոդված 85. Խորհրդի ընտրությունները

1. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ սույն օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Եթե խորհրդի անդամներն ընտրված են գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ, ապա ժողովի՝ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել միայն խորհրդի բոլոր անդամների վերաբերյալ:

2. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաև անվանատերերին:

Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

3. Խորհրդի ընտրությունները 500 և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում իրականացվում են գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ:

Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ, եթե դա նախատեսված է կանոնադրությամբ:

Գումարային (կումուլյատիվ) քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմս ունի խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամների քանակին հավասար ձայների քանակ:

Բաժնետերը քվեարկության ընթացքում իրավունք ունի ձայները տրամադրել մեկ թեկնածուին կամ բաշխել մի քանի թեկնածուների միջև:

Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

4. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել:

Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իրավունք ունեն ընդգրկվել խորհրդի կազմում առանց ընտրության:

5. Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը, եթե կանոնադրությամբ դա արգելված չէ:

Բաց ընկերություններում խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, որը՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ:

բ) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրության:

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն ընկերության և (կամ) ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ:

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության արտաքին աուդիտին իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող:

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել ընկերության խորհրդի անդամ:

զ) չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր:

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող:

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի «զ» կետի իմաստով նշանակալից է համարվում ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:

Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել:

Խորհրդի անդամների նկատմամբ կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել նաև այլ սահմանափակումներ և պահանջներ:

Խնդիր 2. /10 միավոր/

Պատասխան /հարց 1 /4 միավոր/

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (Օրենսգիրք) 113-րդ հոդվածը նկարագրում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը: Մասնավորապես այդ հոդվածի 1-ին մասում թվարկված են այն բոլոր դեպքերը, երբ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը: Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը նախատեսում է աշխատանքային պայմանագրի լուծում աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում, իսկ 8-րդ կետը՝ աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում: Օրենսգրքի 122-րդ հոդվածը մանրամասնում է աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը:

Նկարագրված իրավիճակում Ընկերության տնօրենը լիովին իրավունք ունի աշխատակցին ազատել աշխատանքից: Մակայն տնօրենը որպես ազատման հիմք ոչ ճիշտ հիմնավորում է ընտրել: Մասնավորապես նկարագրված իրավիճակում պետք էր որպես ազատման հիմք նշել ոչ թե աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը, այլ աշխատողի կողմից ոգելից խմիչքների ազդեցության տակ աշխատավայրում գտնվելը: Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը ենթադրում է, որ աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

Նշված դեպքերից և ոչ մեկը չի համապատասխանում նկարագրված իրավիճակին, և հետևապես Ընկերության տնօրենի՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով աշխատակցին աշխատանքից ազատելն իրավաչափ չէ:

Պատասխան /հարց 2 /6 միավոր/

ա/ Աշխատավայրում ոգելից խմիչք օգտագործելու որևէ պատճառ չի կարող արդարացնել այդ հանգամանքը կամ որևէ կերպ մեղմել արարքը: Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը նախատեսում է աշխատանքային պայմանագրի լուծում աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում՝ առանց նախատեսելու որևէ բացառություն կամ մատնանշելու որևէ մեղմացուցիչ հանգամանք: Հետևապես, աշխատակցի բերված փաստարկն ու իր կողմից որպես հիմնավորում ներկայացված բժշկական տեղեկանքը չեն կարող աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով հարգելի պատճառ համարվել՝ ոգելից խմիչքների ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում աշխատանքից չազատելու համար:

բ/ Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ Ընկերության տնօրենը, առանց նկատողություն կամ խիստ նկատողություն կարգապահական տույժ կիրառելու, միանգամից արձակել է ազատման հրաման, ապա հարկ է նշել, որ Օրենսգիրքը որևէ նման իմպերատիվ պահանջ չի նշում: Օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանվում են աշխատանքային

կարգապահությունը խախտելու համար կիրառվող կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն և Օրենսգրքով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում (մասնավորապես՝ նշված հոդվածով հստակ նախատեսված է աշխատանքային պայմանագրի լուծում Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով): Իսկ Օրենսգրքի 224-րդ հոդվածը նշում է, որ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը: Ստացվում է, որ գործատուն ինքը պետք է գնահատի կատարված խախտման ծանրությունը և ըստ այդմ ընտրի կարգապահական տույժի տեսակը: Այս փաստարկը ևս անհիմն է:

զ/ Աշխատակցի փաստարկը, որ ինքը չի ծանուցվել աշխատանքից ազատման մասին, ուստի խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջները, այս դեպքում ևս հիմնավոր չեն: Չնայած որ Օրենսգրքի 113-րդ հոդվածն անդրադառնում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրն առանձին հիմքերով լուծելու դեպքում գործատուի կողմից աշխատողին ծանուցելու պարտականությանը, այդուհանդերձ նույն հոդվածի 2-րդ մասով չի նախատեսվում ծանուցում քննարկվող հիմքի դեպքում և բացի այդ, Օրենսգրքի 123-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու: Ստացվում է, որ գործատուն պարտավոր չէր ծանուցել աշխատակցին աշխատանքից ազատման վերաբերյալ:

դ/ Աշխատանքի վայրում երկարամյա և արդյունավետ աշխատանքը չի ենթադրում անսահմանափակ արտոնություններ: ՀՀ աշխատանքային օրենսդրությունը որևէ դրույթ չի պարունակում նման դեպքերում գործատուի գործողությունները կամ որոշումները կաշկանդելու առումով, ուստի տվյալ դեպքում ավելի քան 10 տարվա աշխատանքային փորձ ունենալը կամ Հնկերության լավագույն աշխատակցի պատվոգրին արժանանալու հանգամանքը կարող էին ունենալ ազդեցություն պարզապես բարոյական, մարդկային կամ աշխատողի հետ անձնական վերաբերմունքի առումով, սակայն ոչ մի կերպ այս հանգամանքներում իրավական ուժ կամ հետևանք ունենալ չեն կարող:

ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Հոդված 113. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում.

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

10) պարտադիր բժշկական գննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

11) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսուհինգ տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

Հոդված 122. Աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով

Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել սովյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

Հոդված 123. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը առանց աշխատողին ծանուցելու

Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:

Հոդված 223. Կարգապահական տույժերը

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

2. Առանձին կատեգորիայի աշխատողների համար օրենքով կարող են սահմանվել նաև կարգապահական այլ տույժեր:

3. Օրենքով չնախատեսված կարգապահական տույժերի կիրառումն արգելվում է:

Հոդված 224. Կարգապահական տույժի ընտրությունը

Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

Հոդված 115. Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը

1. Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում գործատուն պարտավոր է գրավոր ծանուցել իր մոտ մինչև մեկ տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, մեկից մինչև հինգ տարի աշխատողին՝ 35 օր առաջ, հինգից մինչև տասը տարի աշխատողին՝ 42 օր առաջ, տասից մինչև տասնհինգ տարի աշխատողին՝ 49 օր առաջ, տասնհինգ տարուց ավելի աշխատողին՝ 60 օր առաջ:

Կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրով կարող են սահմանվել սույն մասով նախատեսված ծանուցման ժամկետների համեմատ ավելի երկար ժամկետներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին և 111-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

3. Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ նշվում են՝

1) աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը, իսկ աշխատողին այլ աշխատանք առաջարկելու դեպքում՝ նաև պաշտոնի անվանումը, աշխատավարձի չափը կամ այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության մասին:

2) աշխատանքից ազատելու տարին, ամիսը, ամսաթիվը:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամանակահատվածներում նոր աշխատանք փնտրելու համար գործատուն պետք է աշխատողին տրամադրի ազատ ժամանակ: Տրամադրվող ժամանակի տևողությունը չի կարող պակաս լինել ծանուցման ժամանակահատվածում ներառվող աշխատաժամանակի տասը տոկոսից: Աշխատանք փնտրելու համար ազատ ժամանակը տրամադրվում է աշխատողի առաջարկած ժամանակացույցով: Այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի միջին աշխատավարձը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին ժամային աշխատավարձի չափը:

5. Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի ժամանակ, և գործատուն չի լուծել պայմանագիրը: Այդ ժամկետում չեն հաշվարկվում աշխատողի արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածները:

Խնդիր 3. /10 միավոր/

Պատասխան /հարց 1 /4 միավոր/

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Օրենսգրք) 377-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետը ամրագրում է, որ երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է, որ համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Ստացվում է, որ երաշխավորության պայմանագրով ապահովված պարտավորության էությունն է կազմում պարտապանի կողմից հիմնական պարտավորությունը խախտելու համար պարտատիրոջ առջև պատասխանատվություն կրելու երաշխավորի պարտականությունը: Այդպիսով՝ պարտատիրոջ առջև երաշխավորի դրամային պարտավորությունը որոշվում է պարտապանի պարտավորության ծավալին համապատասխան, եթե երաշխավորության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Այս դրույթից երևում է, որ Բանկի պահանջը պարտապանից և երաշխավորից պարտավորության գումարը համապարտության կարգով բռնագանձելու մասին, իրավաչափ է:

Սակայն հարկ է նկատել, որ Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանը՝ որպես երաշխավոր, հանդես է եկել Բանկի և Ընկերության միջև 14.01.2020թ. կնքված թիվ 007 գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում Ընկերության ստանձնած պարտավորությունների համար, որով Պարտապանին պետք է տրամադրվեր մինչև 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր գումարով վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆոններ և բանկային երաշխիքներ: Ըստ այդմ, 14.01.2020թ. կնքված թիվ 141-007/Վ վարկային պայմանագրով Ընկերությանը տրամադրվել է 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ գումար, իսկ Բանկի և Ընկերության միջև 17.01.2020թ. կնքված թիվ 141-007/Վ վարկային պայմանագրին կից համաձայնագրով՝ ևս 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ստացվում է, որ Բանկը, ընդհանուր առմամբ, Ընկերությանը տրամադրել է 26,000,000 (քսանվեց միլիոն) ՀՀ դրամի վարկային միջոցներ, չնայած որ Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանը երաշխավորության պայմանագրի համաձայն ստանձնել էր մինչև 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամի պարտավորության կատարման ապահովում և չէր տվել իր անվերապահ համաձայնությունը պարտավորության չափի փոփոխության վերաբերյալ:

Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ երաշխավորությունը դադարում է՝ դրանով ապահովված պարտավորությունը դադարելու, ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների: Հետևապես, Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանը վկայակոչել է Օրենսգրքի սույն հոդվածի դրույթները և

դատարանին հիմնավորել, որ իր կողմից տրված երաշխավորությունը դադարել է: Դատարանը, հաշվի առնելով ներկայացված փաստերի ճշմարտացիությունը և իրավաչափությունը, բավարարել է Ա/Ձ Վաղինակ Ապրեսյանի առարկությունը և վերացրել վերջինի գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու որոշումը:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 377. Երաշխավորի պատասխանատվությունը

1. Պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

2. Երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

3. Համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Հոդված 362. Պարտատիրոջ իրավունքները համապարտ պարտականության դեպքում

1. Պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

2. Համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից:

3. Համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

Հոդված 382. Երաշխավորությունը դադարելը

Երաշխավորությունը դադարում է՝

1) դրանով ապահովված պարտավորությունը դադարելու, ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների.

2) երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար.

3) եթե պարտատերը հրաժարվել է ընդունել պարտապանի կամ երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը.

4) երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով, որով այն տրվել է: Նման ժամկետի բացակայության դեպքում երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը, երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, երաշխավորի դեմ հայց չի հարուցել: Այն դեպքերում, երբ հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշվել է

պահանջի պահով, երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը երաշխավորության պայմանագիր կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել:

Պատասխան /հարց 2 /6 միավոր/

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

§ 4. ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 375. Երաշխավորության պայմանագիր

1. Երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար:

2. Երաշխավորության պայմանագիրը կարող է կնքվել նաև ապագայում ծագելիք պարտավորության ապահովման համար:

Հոդված 376. Երաշխավորության պայմանագրի ձևը

Երաշխավորության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է երաշխավորության պայմանագրի անվավերությանը:

Հոդված 377. Երաշխավորի պատասխանատվությունը

1. Պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

2. Երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները հատուցելը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

3. Համատեղ երաշխավորություն ստանձնած անձինք պարտատիրոջ առջև պատասխանատվություն են կրում համապարտ, եթե այլ բան նախատեսված չէ երաշխավորության պայմանագրով:

Հոդված 378. Երաշխավորի ծառայությունների վարձատրությունը

Երաշխավորը պարտապանին մատուցած ծառայությունների համար ունի վարձատրության իրավունք, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 379. Պարտատիրոջ պահանջի դեմ առարկելու երաշխավորի իրավունքը

1. Երաշխավորն իրավունք ունի պարտատիրոջ պահանջի դեմ անել այնպիսի առարկություններ, որոնք կարող էր ներկայացնել պարտապանը, եթե այլ բան չի բխում երաշխավորության պայմանագրից: Երաշխավորը չի կորցնում առարկելու իրավունքը նույնիսկ այն դեպքում, երբ պարտապանը դրանցից հրաժարվել է կամ ընդունել է իր պարտքը:

2. Երաշխավորը պարտավոր է մինչև պարտատիրոջ պահանջը բավարարելը, այդ մասին նախազգուշացնել պարտապանին, իսկ եթե երաշխավորի դեմ հայց է հարուցվել, պարտապանին մասնակից դարձնել գործին:

3. Եթե երաշխավորը չի կատարել սույն հոդվածի 2-րդ կետում նշված պարտականությունները, պարտապանն իրավունք ունի երաշխավորի հետադարձ պահանջի դեմ ներկայացնել այնպիսի առարկություններ, որոնք նա ունի պարտատիրոջ դեմ:

Հոդված 380. Պարտավորությունը կատարած երաշխավորի իրավունքները

1. Պարտավորությունը կատարած երաշխավորին են անցնում այդ պարտավորությամբ պարտատիրոջ իրավունքները և պարտատիրոջ՝ որպես գրավառուի պատկանող իրավունքներն այն ծավալով, որով երաշխավորը բավարարել է պարտատիրոջ պահանջը: Երաշխավորն իրավունք ունի նաև պարտապանից պահանջել հատուցելու պարտատիրոջը վճարած գումարի տոկոսներն ու, պարտապանի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ, իր կրած այլ վնասները:

2. Պարտավորությունը երաշխավորի կողմից կատարելուց հետո պարտատերը պարտավոր է երաշխավորին հանձնել պարտապանի դեմ ունեցած իր պահանջը հավաստող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները:

3. Սույն հոդվածով սահմանված կանոնները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ երաշխավորի ու պարտապանի միջև կնքված պայմանագրով և չի բխում նրանց հարաբերություններից:

Հոդված 381. Պարտապանի կողմից պարտավորությունը կատարելու մասին երաշխավորին տեղեկացնելը

Երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը կատարած պարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել երաշխավորին: Հակառակ դեպքում, իր հերթին պարտավորությունը կատարած երաշխավորն իրավունք ունի պարտատիրոջից բռնագանձել անհիմն ստացածը կամ հետադարձ պահանջ ներկայացնել պարտապանին:

Հոդված 382. Երաշխավորությունը դադարելը

Երաշխավորությունը դադարում է՝

1) դրանով ապահովված պարտավորությունը դադարելու, ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է նրա պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների:

2) երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար:

3) եթե պարտատերը հրաժարվել է ընդունել պարտապանի կամ երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը:

4) երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով, որով այն տրվել է: Նման ժամկետի բացակայության դեպքում երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը, երաշխավորությամբ ապահովված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, երաշխավորի դեմ հայց չի հարուցել: Այն դեպքերում, երբ հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշվել է պահանջի պահով, երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը երաշխավորության պայմանագիր կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել:

Խնդիր 4. /10 միավոր/

Պատասխան /հարց 1 /4 միավոր/

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Օրենսգրք) 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները, վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով, վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաժինը վաճառողը պարտավոր է իր բաժինը երրորդ անձի վաճառելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել բաժնային սեփականության մյուս մասնակիցներին՝ նշելով զինը և վաճառքի մյուս պայմանները: Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ տասն օրվա ընթացքում, վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սեփականության ցանկացած մասնակից իրավունք ունի երեք ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բաժինը գնելու նախապատվության իրավունքը չի կարող զիջվել: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի կանոնները կիրառվում են նաև բաժինը փոխանակության պայմանագրով օտարելիս:

Սվետլանան, Տիգրանը և Տրդատը գործել են ՀՀ քաղաքացիական օրենսդրության պահանջներին համապատասխան՝ իրենց բաժնեմասի վաճառքի մտադրության մասին ծանուցելով մյուս սեփականատերերին՝ ծանուցման մեջ նշելով նաև զինը և վաճառքի մյուս պայմանները: Եթե Սվետիք Իսկոյանի հետ գնի շուրջ համաձայնության չգան, ապա իրենք ազատ են ծանուցումից տասն օր անց իրենց բաժնեմասը 12 մլն. ՀՀ դրամով վաճառել ցանկացած անձի:

Հովհաննես Թամամյանի գործողությունները չեն բխել Օրենսգրքի վերը նշված դրույթների պահանջներից: Նա իրավունք չունի առանց մյուս սեփականատերերին տեղեկացնելու՝ զիջել իր բաժնեմասը պարտքի դիմաց: Բացի այդ, Հովհաննեսի այն պնդումները, թե մյուս սեփականատերերին բաժնեմասի վաճառքի մտադրության վերաբերյալ ծանուցելու պահանջը վերաբերում է բացառապես անշարժ գույքին, իրավաչափ չէ:

Սվետիք Իսկոյանը գույքի 100 տոկոս սեփականության իրավունքը ձեռքբերելու համար պետք է փորձի համաձայնության գալ Սվետլանայի, Տիգրանի և Տրդատի հետ: Ընդ որում, նա ունի տասը օր ժամանակ: Ինչ վերաբերում է Հովհաննեսի բաժնեմասին, որն օտարվել (պարտքի դիմաց զիջվել) է Վահագն Արշակյանին, ապա Սվետիքը կարող է իրեն հայտնի դառնալու պահից երեք ամսվա ընթացքում դիմել դատարան՝ Հովհաննեսի և Վահագնի միջև տեղի ունեցած գործարքը չեղարկելու և գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրեն փոխանցելու պահանջով: Այսինքն, դատարանի որոշումից հետո Սվետիքը պետք է Վահագնին վճարի այն գումարը, որի դիմաց Հովհաննեսն օտարել (պարտքի դիմաց զիջել) է իր բաժնեմասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրք

Հոդված 195. Գնելու նախապատվության իրավունքը

1. Ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները, վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով,

վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի:

2. Բաժինը վաճառողը պարտավոր է իր բաժինը երրորդ անձի վաճառելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել բաժնային սեփականության մյուս մասնակիցներին՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ տասն օրվա ընթացքում, վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի:

3. Գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սեփականության ցանկացած մասնակից իրավունք ունի երեք ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները:

4. Բաժինը գնելու նախապատվության իրավունքը չի կարող զիջվել:

5. Սույն հոդվածի կանոնները կիրառվում են նաև բաժինը փոխանակության պայմանագրով օտարելիս:

Պատասխան /հարց 2 /6 միավոր/

Ընդհանուր սեփականության ծագման հիմքերն ու բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու իրավական կարգավորումները ներկայացված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-194 հոդվածներում:

Իսկ սեփականության իրավունքի դադարման հիմքերը նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-288-րդ հոդվածներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

Հոդված 189. Ընդհանուր սեփականության հասկացությունը և ծագման հիմքերը

1. Երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով:

2. Գույքը կարող է ընդհանուր սեփականությանը պատկանել սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն):

3. Գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը համարվում է բաժնային, եթե օրենքով դրա նկատմամբ սահմանված չէ համատեղ սեփականություն:

4. Ընդհանուր սեփականությունը ծագում է այն գույքը երկու կամ մի քանի անձանց սեփականության վերածվելու դեպքում, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոխման (անբաժանելի գույք) կամ օրենքով ենթակա չէ բաժանման:

Բաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը ծագում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

5. Համատեղ սեփականության մասնակիցների համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատարանի վճռով, ընդհանուր գույքի նկատմամբ կարող է սահմանվել այդ անձանց բաժնային սեփականություն:

6. Պայմանագրային ֆոնդի ակտիվների նկատմամբ ֆոնդի մասնակիցների ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Հոդված 190. Ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում բաժինները որոշելը

1. Բաժինները համարվում են հավասար, եթե բաժնային սեփականության մասնակիցների բաժինները չեն կարող որոշվել օրենքի հիման վրա կամ սահմանված չեն բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

2. Բաժնային սեփականության բոլոր մասնակիցների համաձայնությամբ կարող է սահմանվել նրանց բաժինները որոշելու և փոփոխելու կարգ՝ ընդհանուր գույքի կազմավորման ու աճի մեջ նրանց ներդրմանը համապատասխան:

3. Բաժնային սեփականության մասնակիցը, որն ընդհանուր գույքի օգտագործման սահմանված կարգի պահպանմամբ իր հաշվին իրականացրել է այդ գույքից անբաժանելի բարելավումներ, կարող է պահանջել դրանց համապատասխան մեծացնելու ընդհանուր սեփականության իրավունքում իր բաժինը:

4. Ընդհանուր գույքից բաժանելի բարելավումներն անցնում են այն մասնակցի սեփականությանը, ով դրանք կատարել է, եթե այլ բան նախատեսված չէ բաժնային սեփականության մասնակիցների համաձայնությամբ:

Հոդված 191. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելը և օգտագործելը

1. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետվում և օգտագործվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի սահմանած կարգով:

2. Բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել, որ իր տիրապետմանը և օգտագործմանը տրամադրվի ընդհանուր գույքի մեջ իր բաժնին համաչափ մաս, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գույքը տիրապետող և օգտագործող մյուս մասնակիցներից պահանջել վնասների հատուցում:

Հոդված 192. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինելը

1. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

2. Բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի իր բաժինը վաճառել, նվիրել, կտակել, գրավ դնել կամ այլ կերպ տնօրինել՝ դրա հատուցելի օտարման դեպքում պահպանելով սույն օրենսգրքի 195 հոդվածում նախատեսված կանոնները:

Հոդված 193. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտները

Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված պտուղները, արտադրանքը և եկամուտները ներառվում են ընդհանուր գույքի կազմում ու բաժնային սեփականության մասնակիցների միջև բաշխվում են նրանց բաժիններին համաչափ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

Հոդված 194. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը պահպանելու ծախսերը

1. Բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից պարտավոր է իր բաժնին համաչափ մասնակցել ընդհանուր գույքից գանձվող հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման այլ ծախսերին:

2. Սեփականատերերից մեկի կողմից, առանց մյուսների համաձայնության, կատարած անհարկի ծախսերը մնացած սեփականատերերի կողմից չեն հատուցվում: Այդ կապակցությամբ ծագող վեճերը լուծվում են դատական կարգով:

Հոդված 279. Մեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների դադարման հիմքերը

1. Մեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝

1) պարտավորությունների համար գույքի վրա տարածվում է բռնագանձում (հոդված 281).

2) օտարվում է այն գույքը, որն օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին (հոդված 282).

3) սեփականությունն օտարվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հոդված 218).

4) վերցվում են անտնտեսվար պահվող մշակութային արժեքները (հոդված 284).

5) կատարվում է ռեկվիզիցիա (հոդված 285).

6) կատարվում է բռնագրավում (հոդված 288).

7) իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (63 և 67 հոդվածներ).

8) գույքն օտարվում է՝ սույն օրենսգրքի 197 հոդվածի 4-րդ կետով, 208 և 220 հոդվածներով նախատեսված դեպքերում.

9) կատարվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում:

3. Պետության սեփականությանը պատկանող գույքն օտարվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով:

4. Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը պատկանող գույքի պետականացումը (ազգայնացումը) կատարվում է օրենքի հիման վրա, այդ գույքի արժեքի ու մյուս վնասների հատուցմամբ՝ սույն օրենսգրքի 286 հոդվածով սահմանված կարգով:

5. Գույքային իրավունքները դադարում են սույն օրենսգրքի 217, 217.7 և 247 հոդվածներով, ինչպես նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Հոդված 280. Մեփականության իրավունքից հրաժարվելը

1. Քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության, իսկ սույն օրենսգրքի 275 հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ գույքը հետ չպահանջելով: Սույն օրենսգրքի 275 հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների սեփականատերը հայտնի չլինելու դեպքում դրանք ներմուծելու պահից մեկ տարի լրանալը հիմք է սեփականության իրավունքից հրաժարվելու փաստը ճանաչելու համար:

2. Մեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար, մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:

Հոդված 281. Մեփականատիրոջ պարտավորություններով գույքի վրա բռնագանձում տարածելը

1. Մեփականատիրոջ պարտավորություններով նրան պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով գույքը կարող է առգրավվել դատարանի վճռի հիման վրա, եթե բռնագանձում տարածելու այլ կարգ նախատեսված չէ պայմանագրով:

2. Գույքի նկատմամբ, որի վրա բռնագանձում է տարածվել, սեփականատիրոջ իրավունքը դադարում է այդ գույքի նկատմամբ այն անձի սեփականության իրավունքի ծագման պահից, ում անցնում է տվյալ գույքը:

Հոդված 282. Անձի սեփականության իրավունքը դադարելն այն գույքի նկատմամբ, որը չի կարող նրան պատկանել

1. Եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցել է այնպիսի գույք, որը սեփականության իրավունքի ծագման պահին օրենքի ուժով չէր կարող նրան պատկանել, սեփականատերն այդ գույքը պետք է օտարի դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով:

1.1. Եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցած գույքը դրա նկատմամբ սեփականության իրավունքը ծագելուց հետո առաջացած փաստական հանգամանքի ի հայտ գալու հիմքով օրենքի ուժով չի կարող նրան պատկանել, ապա սեփականատերն այդ գույքը պետք է օտարի այդ հանգամանքի ի հայտ գալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով:

2. Այն դեպքերում, երբ սեփականատերը սույն հոդվածի 1-ին կամ 1.1-ին կետում նշված ժամկետում գույքը չի օտարում, ապա նման գույքը՝ դրա բնույթի և նշանակության հաշվառմամբ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի դիմումի հիման վրա կայացված դատարանի վճռով վաճառվում է հարկադիր կարգով, և ստացված գումարը հանձնվում է նախկին սեփականատիրոջը կամ վերածվում է պետական կամ համայնքային սեփականության, իսկ նախկին սեփականատիրոջը հատուցվում է գույքի արժեքը: Այդ դեպքում հանվում են գույքն օտարելու ծախսերը:

3. Եթե օրենքով թույլատրվող հիմքերով քաղաքացու կամ իրավաբանական անձի մոտ հայտնվել է այնպիսի գույք, որը ձեռք բերելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն, և որն ստանալու համար սեփականատիրոջ խնդրանքը մերժվել է, այդ գույքն օտարվում է այն գույքի համար սահմանված կարգով, որը չի կարող պատկանել տվյալ սեփականատիրոջը:

Հոդված 284. Անտնտեսվար պահվող մշակութային արժեքները վերցնելը

1. Այն դեպքերում, երբ օրենքի համաձայն՝ առանձնապես արժեքավոր և պետության կողմից պահպանվող մշակութային արժեքների սեփականատերը դրանք պահում է անտնտեսվար, ինչը սպառնում է դրանց նշանակության կորստին, նման արժեքները դատարանի վճռով կարող են վերցվել սեփականատիրոջից՝ պետության կողմից դրանց գինը հատուցելու միջոցով:

2. Մշակութային արժեքները վերցնելիս սեփականատիրոջը դրանց արժեքը հատուցվում է կողմերի համաձայնությամբ, իսկ վեճի դեպքում՝ դատարանի սահմանած չափով:

Հոդված 285. Ռեկվիզիտա

1. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքերում և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններում ու կարգով, պետական մարմինների որոշմամբ, վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության՝ դրա արժեքը վճարելու պայմանով (ռեկվիզիտա):

2. Սեփականատերը կարող է դատարանում վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը:

3. Անձը, ում գույքը հարկադրաբար վերցվել է, իրավունք ունի պահանջել, որ իրեն վերադարձվի պահպանված գույքը, եթե վերացել են այն հանգամանքները, որոնց կապակցությամբ կատարվել է ռեկվիզիտա:

Հոդված 286. Օրենքի ուժով սեփականության իրավունքը դադարելու հետևանքները

Հայաստանի Հանրապետության կողմից սեփականության իրավունքը դադարեցնող օրենքն ընդունելու դեպքում դրա հետևանքով սեփականատիրոջը պատճառված վնասները, այդ թվում՝ գույքի արժեքը, հատուցում է պետությունը: Վնասների հատուցման մասին վեճերը լուծում է դատարանը:

Հոդված 287. Գույքի գնահատումը սեփականության իրավունքը դադարելիս

Սեփականության իրավունքը դադարելիս գույքը գնահատվում է դրա շուկայական արժեքով:

Հոդված 288. Բռնագրավում

Օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից կարող է անհատույց առգրավվել դատավճռով՝ որպես հանցագործության համար պատժամիջոց (բռնագրավում):

Հոդված 288.1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը

1. Ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է դատարանի վճռով՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Խնդիր 5. /8 միավոր/

Պատասխան /հարց 1 /4 միավոր/

Առաջին հերթին, դատարանը, բացի վաճառքի նախանական պայմանագիրը քննության առարկա դարձնելուց, կպահանջի «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի և «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի միջև կնքված գործակալության պայմանագիրը, որպեսզի գա եզրահանգման, թե գնորդի հետ կնքված պայմանագրով վերջնական իրավունքներն ու պարտականությունները ստանձնած կողմը պրինցիպալն է, թե՛ գործակալը: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունն ամրագրում է, որ գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ: Նույն հոդվածի նույն կետի 3-րդ պարբերությամբ նշվում է, որ երրորդ անձի հետ պրինցիպալի անունից և նրա հաշվին գործակալի կնքած գործարքով իրավունքներն ու պարտականությունները ձեռք է բերում անմիջականորեն պրինցիպալը:

Քանզի «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի և «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի միջև կնքվել է գործակալության պայմանագիր, որով նախատեսվել է, որ գործակալը պարտավորվում է վարձատրությամբ պրինցիպալի հանձնարարությամբ, պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել ք. Երևան, Արհեստագործների փ. 11/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանների վաճառքի նախնական և վերջնական պայմանագրերի կնքման և դրանցից բխող անհրաժեշտ այլ իրավաբանական գործողությունները, ստացվում է, որ քաղաքացի Կիրակոս Վշտունու նկատմամբ նշված գործարքով իրավունքներն ու պարտականությունները ձեռք է բերում անմիջականորեն պրինցիպալը, այսինքն՝ «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ն:

Հետևապես «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ն որևէ պարտականություն չի կրում քաղաքացի Կիրակոս Վշտունու նկատմամբ: «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի տնօրեն Վոսան Իշխանյանի փաստարկը, թե իրենք ընդամենը միջնորդ կազմակերպություն են և գործակալության պայմանագրի շրջանակներում ծառայություն են մատուցել սնանկ ճանաչված «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին, իրավաչափ է: Այն դեպքում, երբ «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի և «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի միջև կնքված լինել գործակալության պայմանագիր, որում կամրագրվեր, որ գործակալը պարտավորվում է վարձատրությամբ պրինցիպալի հանձնարարությամբ, իր անունից և պրինցիպալի հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ, ապա այս դեպքում գործարքի հետ կապված բոլոր իրավունքներն ու պարտականությունները կլինեին գործակալինը, այսինքն՝ «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ին, և տվյալ դեպքում քաղաքացի Կիրակոս Վշտունու պահանջը կլինել արդարացի:

Հաշվի առնելով վերը ներկայացված փաստարկներն ու ապացույցները՝ դատարանը կմերժի Կիրակոս Վշտունու հայցն ընդդեմ «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի՝ առանց բավարարման թողնելու 20.2 մլն. ՀՀ դրամ պահանջը՝ որպես վճարված 13.2 մլն. ՀՀ դրամ գումարի և պատճառված 7 մլն. ՀՀ դրամ վնասի փոխհատուցում:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

Գ Լ ՈՒ Խ 42

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հոդված 806. Գործակալության պայմանագիր

1. Գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ:

Երրորդ անձի հետ իր անունից և պրինցիպալի հաշվին կնքված գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում գործակալը, թեկուզև պրինցիպալը վկայակոչված լինի գործարքում և գործարքը կատարելու հետ կապված անմիջական հարաբերությունների մեջ մտած լինի երրորդ անձի հետ:

Երրորդ անձի հետ պրինցիպալի անունից և նրա հաշվին գործակալի կնքած գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում անմիջականորեն պրինցիպալը:

2. Գործակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

3. Այն դեպքերում, երբ գործակալության պայմանագրում նախատեսված են պրինցիպալի անունից գործարքներ կնքելու համար գործակալի ընդհանուր լիազորություններ, պրինցիպալն իրավունք չունի երրորդ անձանց հետ հարաբերություններում վկայակոչել գործակալի մոտ պատշաճ լիազորությունների բացակայությունը, եթե չի ապացուցում, որ երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար գործակալի լիազորությունների սահմանափակման մասին:

4. Գործակալության պայմանագիրը կարող է կնքվել դրա գործողության որոշակի ժամկետով կամ առանց դրա:

5. Օրենքով կարող են նախատեսվել գործակալության պայմանագրի առանձին տեսակների առանձնահատկությունները:

Պատասխան /հարց 2 /4 միավոր/

Քաղաքացի Կիրակոս Վշտունու և «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի միջև փոխադարձ պահանջներ չեն կարող առաջանալ, քանզի կնքված գործակալության պայմանագրով գնորդի նկատմամբ իրավունքներ և պարտականություններ ձեռք է բերել անմիջականորեն պրինցիպալը՝ «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ն:

«ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի և «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի միջև ևս փոխադարձ պահանջներ չեն կարող առաջանալ, եթե իհարկե քաղաքացի Կիրակոս Վշտունուց հավաքագրված գումարների 10%-ը՝ որպես գործակալական վարձատրություն, «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ն արդեն ստացել է, հակառակ դեպքում վերջինի պահանջը «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի նկատմամբ կարող է լինել 1.32 մլն. ՀՀ դրամի չափով: Ըստ էության, «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ն որևէ դեպքում չի կարող «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ից հետ պահանջել վերջինիս հասանելիք 1.32 մլն. ՀՀ դրամ գումարը, քանզի իր պայմանագրային պարտականությունները վերջինս ամբողջությամբ կատարել է, այն է՝ կնքել է համապատասխան վաճառքի նախնական պայմանագիր գնորդ՝ քաղաքացի Կիրակոս Վշտունու հետ, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 807-րդ հոդվածով նախատեսված իրեն հասանելիք գործակալական վարձատրության շուրջ որևէ վեճի առարկա չի կարող լինել:

Ստեղծված իրավիճակում քաղաքացի Կիրակոս Վշտունին լիարժեք իրավունք ունի փոխհատուցման պահանջ ներկայացնել «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին՝ վճարված 13.2 մլն. դրամ կանխավճարի, պայմանագրով հասանելիք տույժերի ու տուգանքների և գործարքից բխող իր

կրած այլ վնասների մասով: Մասնավորապես՝ բացի վճարված 13.2 մլն. դրամ կանխավճարից, Կիրակոս Վշտունին կարող է պահանջել պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքները, իսկ պայմանագրով նման դրույթ նախատեսված չլինելու դեպքում՝ առնվազն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուցապատող «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ն 2019թ. դեկտեմբերի 15-ին դատարանի որոշմամբ ճանաչվել է սնանկ, ինչի մասին գնորդը տեղեկացել է միայն «ԳՈԼԴ ԱՓԱՐԹՄԵՆԹ» ՍՊԸ-ի հետ իր ունեցած փոխադարձ տեղեկատվության փոխանակման ժամանակ, քաղաքացի Կիրակոս Վշտունին պետք է անմիջապես դիմի սնանկության դատարան՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանին ներկայացնելով իր պահանջը՝ համապատասխան հիմնավորող հաշվարկներով, փաստարկներով, ապացույցներով և մնացած բոլոր հանգամանքներով: Դատարանը, ըստ ամենայնի, քաղաքացի Կիրակոս Վշտունու հիմնական պահանջը (13.2 մլն. ՀՀ դրամի չափով), իսկ դրանից բխող մյուս պահանջները՝ պատշաճ հիմնավորված լինելու դեպքում, կթույլատրի սնանկության կառավարչին ներառել պարտատերերի ցուցակում: Սնանկության կառավարիչը «ԲԻԳ ԲԻԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին հասանելիք միջոցներով ապահովված պահանջները բավարարելուց հետո, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով սահմանված կարգով կանցնի չապահովված պահանջների բավարարման հերթականությանը և ըստ տվյալ դասի հերթի՝ համապատասխան միջոցների առկայության դեպքում կբավարարի քաղաքացի Կիրակոս Վշտունու պահանջը:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հոդված 806. Գործակալության պայմանագիր

1. Գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական ու այլ գործողություններ:

Երրորդ անձի հետ իր անունից և պրինցիպալի հաշվին կնքված գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում գործակալը, թեկուզև պրինցիպալը վկայակոչված լինի գործարքում և գործարքը կատարելու հետ կապված անմիջական հարաբերությունների մեջ մտած լինի երրորդ անձի հետ:

Երրորդ անձի հետ պրինցիպալի անունից և նրա հաշվին գործակալի կնքած գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում անմիջականորեն պրինցիպալը:

2. Գործակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

3. Այն դեպքերում, երբ գործակալության պայմանագրում նախատեսված են պրինցիպալի անունից գործարքներ կնքելու համար գործակալի ընդհանուր լիազորություններ, պրինցիպալն իրավունք չունի երրորդ անձանց հետ հարաբերություններում վկայակոչել գործակալի մոտ պատշաճ լիազորությունների բացակայությունը, եթե չի ապացուցում, որ երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար գործակալի լիազորությունների սահմանափակման մասին:

4. Գործակալության պայմանագիրը կարող է կնքվել դրա գործողության որոշակի ժամկետով կամ առանց դրա:

5. Օրենքով կարող են նախատեսվել գործակալության պայմանագրի առանձին տեսակների առանձնահատկությունները:

Հոդված 807. Գործակալական վարձատրություն

1. Պրինցիպալը պարտավոր է գործակալության պայմանագրում սահմանված չափով և կարգով վարձատրել գործակալին:

Եթե գործակալության պայմանագրում գործակալական վարձատրության չափը նախատեսված չէ և այն չի կարող որոշվել, ելնելով պայմանագրի պայմաններից, վարձատրությունը վճարվում է սույն օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետում սահմանված չափին համապատասխան:

2. Պայմանագրում գործակալական վարձատրություն վճարելու կարգի մասին պայմանների բացակայության դեպքում պրինցիպալը պարտավոր է գործակալի կողմից անցած ժամանակահատվածի մասին հաշվետվությունը ներկայացնելու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում վճարել վարձատրությունը, եթե վարձատրությունը վճարելու այլ կարգ չի բխում պայմանագրի էությունից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

Հոդված 46. Պահանջների հաստատումը

1. Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

1.1. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված միջնորդության առկայության և պարտատիրոջ կողմից սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով պահանջ ներկայացվելու դեպքում դատարանը դիտարկում է միայն այդ պահանջը:

2. Պարտատիրոջ պահանջում պետք է նշվեն՝

ա) պահանջը ներկայացնող պարտատիրոջ՝

- իրավաբանական անձի համար՝ անվանումը և գտնվելու վայրը,

- ֆիզիկական անձի համար՝ անունը և բնակության վայրը.

բ) պարտավորությունը, որից բխում է պահանջը, ինչպես նաև կատարման ժամկետը.

գ) պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով.

դ) պահանջը հիմնավորող հանգամանքները:

Պահանջին կից ներկայացվում են այն հիմնավորող փաստաթղթերը: Պահանջը ներկայացնելու ժամկետից հետո պահանջը հիմնավորող փաստաթղթեր կարող են ներկայացվել, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում նման փաստաթուղթ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Պահանջը և նրանց կից փաստաթղթերը ներկայացվում են 3 օրինակից:

2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները չպահպանելու դեպքում ներկայացված պահանջը չի դիտարկվում, որի մասին պարտատերը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:

3. Պահանջը սահմանված կարգով ներկայացվելու դեպքում գրանցվում է դատարանում:

4. Պահանջի գրանցումից ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում դատարանը պահանջի և նրան կից փաստաթղթերի օրինակներն ուղարկում է կառավարչին՝ դրա մեկ օրինակը պարտապանին հանձնելու համար:

5. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ սույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան:

6. Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ):

8. Եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատարանը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

9. Պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումից հետո դատարան ներկայացրած նոր պահանջները և պահանջների փոփոխությունները դատարանը

հանձնում է կառավարչին: Կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դրա պատճենն ուղարկում է պարտապանին, պարտատերերին կամ այդ մասին ամփոփ տեղեկատվություն է հրապարակում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում:

Եթե պահանջի փոփոխության պատճենը ստանալուց կամ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում տեղեկատվություն հրապարակելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը, պարտատերերը պահանջի, պահանջի փոփոխության դեմ գրավոր առարկություն չեն ներկայացնում դատարան, ապա կառավարիչը պահանջը կամ պահանջի փոփոխությունը գրանցում է պահանջների գրանցամատյանում՝ սույն օրենքի 85-րդ հոդվածին համապատասխան:

10. Եթե պահանջը կամ պահանջի փոփոխությունն առարկվում է, ապա դատավորը սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով որոշում է պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը:

Առարկությունների քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:

11. Սույն հոդվածով նախատեսված առարկությունները դրանք ներկայացնելու ժամկետի ավարտից հետո ներկայացվելու և ժամկետի բացթողումը հարգելի ճանաչվելու դեպքերում քննարկվում են դատարանի կողմից: Առարկությունները քննարկելուց հետո դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը՝ ըստ անհրաժեշտության փոփոխություն կատարելով պահանջի վերաբերյալ կայացված դատական ակտում:

Ընդամենը 50 միավոր